

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽԻԶԱՆՑԻ

Վասպորականի մանրանկարչության ուրուց ոճը իր ավարտուն տեսքը ստացավ ադ դպրոցի ամենաբեղուն դեմքերից մեկի՝ Հովհաննես Խիզանցու մոտ: Հովհաննեսը ստեղծագործական ասպարեզ է դուրս եկել XIV դ. վերջին քառորդին և XV դարի սկզբներին: Ասրել է Խիզան քաղաքում: Կենագրական տեղեկությունները շատ կցկուուր են: Իր ընդօրինակած ձեռագրերի հիշատակարաններում նա խնդրում է հիշել իր երախտապարտ ու սիրելի հորը՝ Մկրտիչ քահանային, ընդհուպ տեղեկություն տալով նրա մահվան մասին:

«...Զի հայրն իմ էր քաղցր և բարի,  
ի յանուան յոյժ գովելի,  
ինձ խնամատար և բերկրալի,  
ի յայսմ ամի (1892 թվ.) առ տէրն  
փոխի»<sup>1</sup>:

Անվանի գրիչ է եղել նաև Հովհաննեսի եղբայր՝ Զաքարիան: Նրա գրչագրած ձեռագրերը երբեմն ինքն է պատկերազարդել<sup>2</sup>: Բացի Զաքարիան, Հովհաննեսն ունեցել է ևս երկու եղբայր, որոնք մահացել են երիտասարդ հասակում: Մեր նկարիչը

<sup>1</sup> Զեռ. Մաշտոցի անվան Մատենադարանի, № 8717, էջ 9թ:

<sup>2</sup> Այս Զաքարիային Հ. Աճառյանը նույնացրել է Աղյամարում XIV դարի երկրորդ կեսին ապրած Զաքարիա «Փիլիստիվա» կոչվող նկարչի մետ (Հայոց անձնանունների բարության, հասոր Գ, Երևան, 1946, էջ 684 (№ 707):

չի մոռանում նաև իր հորեղբայրներին՝ Գրիգոր և Ստեփանոս քահանաներին: Հետաքրքրական է, սակայն, որ այս տեղեկությունների մեջ քացակայում է մոր անունը. դա այն դեպքում, եթե նա մի առ մի թվարկել է իր բոլոր հարազատներին, նույնիսկ եղբոր որդիներին: Արդ, ենթադրում ենք, որ նկարչի մայրը շատ վաղ է մահացել՝ փոքրիկների խնամքը թողնելով տատի վրա. «...զերախտար մեծ մամն մեր զլեխաթունն, որ քան զմայ առաւել աշխատեցաւ ի վերայ մեր և սեղյ զմեզ»: Մեկ անգամ էլ Հովհաննեսը ակնարկում է մորաքրոջը՝ Խել-Մելեքին, ինչպես նաև երկու որդյակներին (գուցե՛ եղբոր), որոնք մահացել են տարածամ անմիջաբերելի վիշտ պատճառելով ծնողներին: Գրեթե իր բոլոր ձեռագրերում Հովհաննեսը խորին երախտագիտությամբ խնդրում է հիշել մեծանուն ուսուցիչներ «...զՅովաննես և զկիրակու վարդապետը, որ էին առաջնորդը սուրբ ուխտիս»: Խոսքը վերաբերում է Վասպորականում քաջ հայտնի բարունապետեր Հովհաննես և Կիրակոս քահանաներին, որոնք հանդիսանում էին Խիզանի ս. Խաչ վանքի առաջնորդները: Վերջիններս, որպես հմուտ ու գիտուն ուսուցիչներ և մշակույթի հովանավորողներ, վկայակոչվել են նաև ուրիշ գրիչների ու մանրանկարիչների կողմից<sup>3</sup>: Այս բարունապետերը ժամանա-

<sup>3</sup> Տես «ԺԴ դարի հայերն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյանը, Երևան, 1950, էջ 448, էջ 578, «ԺԵ դարի հայերն ձեռա-

կին իրենց ոստմանառությունը ստացել են Մեծոփա Բոշվակով ովասում, որը միջնադարյան Հայաստանի մշակութային խոհանուրության մեջ մեջ էր: Ի դեպ, այդ շրջացքում Մեծոփում գործել է մեր մասնելագիտությանը քաջ հայտնի Հովհաննելու Մեծոփեցին<sup>4</sup>: Մեծոփա կրթարանի հետ կապեր են հաստատել նաև միջնադարյան Հայաստանի շատ ամենամի գործիչներ, որոնց թվում նաև Գրիգոր Տաթևացին, որը նույնիսկ մի կարծ ժամանակամիջոց անց կացնում պատեղ:

Այս բոլորից հետևում է, որ հաճախ Հովհաննելու խիզանցու մենք գործ ունենք մի անհատականության հետ, որն իր վոր ամսի միջականութեան կրել է ժամանակի առաջավոր կողմանությունը, անստարակույս, հաղորդակից դառնալով մշակութային խոշոր կենսությունը ընդունված գեղագիտական հայաստանությունուն մեջ ունենալի ու ճաշակի հետ:

Սվարտեղով Հովհաննելու մասին եղած կենսագրական տեղեկությունները, ասենք, որ նա Վասպուրականի դպրոցի միակ եղբայրացուցիչն է, որի ստեղծագործությունները դեռ մեր դարի 20-ական թվականներին արժանացել են հասուկ ուշադրության<sup>5</sup>:

Մերուպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահպանվում է Հովհաննելու պատեղագրադած և ընթօրինակած տասներկու ձեռագիր-մատյան: Դրանք ընդգրկում են շոշաց երեսուն տարվա ժամանակամիջոց՝ 1390—1420 թվականները:

I. Ձեռ. № 846, Աստվածաշունչ, 1390—1400 թվ., Խիզան, Գրիշ՝ Պետրոս, ստացող՝ Հովհաննելու, թերթ՝ 560, թուղթ, 28×18,5 մետրում, երկայուն, բոլորագիր:

**Մանրանկարներ**—Մի քանի թեմատիկ գլխագարդեր ու լուսանցագարդեր:

գրեթե հիշատակարաններ, մասն Ա. կազմեց Լ. Ս. Խաչիկյանը, Երևան, 1955, էջ 188: Նոյնիսկ Մեծոփում 1411 թվ. ընթօրինակած մի ձեռագիր հիշատականում գրիշը ի թիվ այլ երախտավորների հիշատակի է նաև Հովհաննելու Կիրակոս ռարունակութերին, որոնք արդեն իմարկել են մահացած էին («ԺԵ դարի հավերեն ձեռագրերի հիշատակարաններ», հն. Ա, էջ 127):

<sup>4</sup> Հովհաննելու Մեծոփեցու մասին տե՛ս Հ. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», Գ, Երևան, 1946, էջ 687—688:

<sup>5</sup> Никольская Е. А., Рукописи мастера Ованеса из Гизане, Харьков, 1928. Ընդամենը 7—8 թվորութեցու մի գրքով է աս, որտեղ մեղմակի խոսք պարզ միարագրական թայութ է կրում: Ըստ որում, Ե. Նիկոլյանացին հայտնի են եղել Հովհաննելու միայն շոր ձեռագրերը:

II. Ձեռ. № 8717, Ավետարան, 1392 թվ., գրիշ՝ Պետրոս, ստացող՝ Թաղեան, թերթ՝ 329, թուղթ, 27×18,5 մեծության, երկայուն, բոլորագիր:

**Մանրանկարներ**—ավետարանական լրիվ շարք, խորաններ, գլխագարդեր, լուսանցագարդեր:

III. Ձեռ. № 898, Մաշտոց, 1401 թվ., գրիշ՝ Հովհաննելու ստացող՝ Գրիգոր, թերթ՝ 166, թուղթ, 18,5×13,7 մեծության, միայնուն, բոլորագիր:

**Մանրանկարներ**—միայն աղքատիկ լուսանցագարդեր:

IV. Ձեռ. № 8904, Ծաշոց, 1401 թվ., գրիշ՝ Հովհաննելու ստացող՝ Հովհաննելու, թերթ՝ 46, թուղթ, 31,7×24 մեծության, երկայուն, բոլորագիր:

**Մանրանկարներ**—գլխագարդեր, լուսանցագարդեր:

V. Ձեռ. № 4228, Ավետարան, 1401 թվ., գրիշ՝ Զաքարիա, ստացող՝ Աստվածատոր, թերթ՝ 288, թուղթ, 25×17 մեծության, երկայուն, բոլորագիր:

**Մանրանկարներ**—ավետարանական լրիվ շարք, խորաններ, գլխագարդեր, լուսանցագարդեր:

VI. Ձեռ. № 5562, Ավետարան, 1402 թվ., գրիշ՝ Հովհաննելու, ստացող՝ Հովհաննելու, թերթ՝ 311, թուղթ, 25,5×17 մեծության, երկայուն, բոլորագիր:

**Մանրանկարներ**—ավետարանական հըկարաշար՝ ոչ լրիվ, խորաններ, գլխագարդեր, լուսանցագարդեր:

VII. Ձեռ. № 5727, Ավետարան, 1404 թվ., գրիշ՝ Ստեփանոս, ստացող՝ Մովսես, թերթ՝ 298, մազաղաթ, 23×17 մեծության, երկայուն, բոլորագիր:

**Մանրանկարներ**—ավետարանական հըկարաշար՝ ոչ լրիվ, խորաններ, գլխագարդեր, լուսանցագարդեր:

VIII. Ձեռ. № 4684, Հայմավուրք, 1407 թվ., գրիշ՝ Հովհաննելու և Ստեփանոս, ստացող՝ Պողոս, թերթ՝ 584, թուղթ, 39×29 մեծության, երկայուն, բոլորագիր:

**Մանրանկարներ**—ստացողի դիմապատկերը, կիսախորան-գլխագարդեր, լուսանցագարդեր:

IX. Ձեռ. № 5444, Ավետարան, 1417 թվ., գրիշ՝ Հովհաննելու, ստացող՝ Ստեփանոս, թերթ՝ 310, թուղթ, 24,5×16,5 մեծության, երկայուն բոլորագիր:

**Մանրանկարներ**—ավետարանական հըկարաշար՝ ոչ լրիվ, խորաններ, գլխագարդեր, լուսանցագարդեր:

X. Ձեռ. № 8897, Ավետարան, XIV դար, գրիշ՝ Հովհաննելու, թերթ՝ 328, թուղթ, 27,5×18,2 մեծության, երկայուն, բոլորագիր:

**Մանրանկարներ—ավետարամիշներ,** խորաններ, գլխազարդեր, լուսանցազարդեր:

**XI. Ձեռ. № 1875,** Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, XIV—XV դդ., գրիչ՝ Հովհաննես, ստացող՝ Հովհաննես, թերթ՝ 227, թուղթ, 24,5×17 մետրության, երկայուն, բոլորագիր:

**Մանրանկարներ—մեկ թեմատիկ, ստացողի և նկարչի հեքանդակարը, գլխազարդեր, լուսանցազարդեր:**

**XII. Ձեռ. № 5458,** Ավետարան, XIV դար, գրիչ՝ Հովհաննես (բ), թերթ՝ 312, մագաղաթ, թուղթ, 32,5×24 մետրության, երկայուն, բոլորագիր:

**Մանրանկարներ—գլխազարդեր, լուսանցազարդեր:**

Վերոհիշյալներից բացի Հովհաննեսին ենք վերագրում ևս չորս ձեռագիր, որոնց մասին եղած տվյալները վերցված են պոռֆ. I. Խաչիկյանի կազմած հիշատակարաններից<sup>9</sup>:

I. Ավետարան, 1413 թվականի, Ակարազարդ<sup>10</sup>:

II. Գանձարան, 1416 թվականի<sup>9</sup>.

III. Գրիգոր Տաթևացի, Քարոզգիրք, 1419 թվականի<sup>10</sup>.

IV. Ավետարան, 1420 թվականի<sup>11</sup>:

Այժմ Հովհաննեսի կատարած Ակարազարդումների մի քանի առանձնահատկությունների մասին:

Թեմատիկ շարք այստեղ, և ընդհանրապես Վասպուրականի ձեռագրերում, տարբերվում է հայ մանրանկարչության մյուս դպրոցներում ընդունված կարգից: Տոնական ցանկը բավական ընդարձակ է. սովորաբար ներկայացվող տասներկու-տասների փոխարեն լինում են շուրջ քանի-

քանինգի հասնող պատկերներ<sup>12</sup>: Ըստ որում, դա կատարվում է ինչպես մի շարք հին նոյնական հին կտակարանային թեմաների վերականգնման ճանապարհով (յեմաներ, որոնք XI—XII դարերից հետո հիմնականու դուրս էին եկել պատկերագրությունից՝ Խաչի մեծադիր պատկերը, Արքահամբ զոհաբերությունը, Արքահամբ հյուրախությունը, Եզեկիլելի տեսիլը, Եվայի և Հովսեփի հանդիպումը, Սոգերի երկրագության առանձին տեսարանը), այնպես էլ զուտ տեղական ճախասիրություններից ու սովորություններից եկող միջանկայլ թեմաների հավելմաբը Բելշեմեմի մանկաց կոտրումը, Պիղատոսի դատը, Հիսուսի հրաշագործությունների ընդարձակ խումբը<sup>13</sup>, առանձները<sup>14</sup> և այլն:

Սակայն թեմատիկ շարի այդշափ ընդարձակ բնույթը պարտադիր չի դառնում ամեն մի ձեռագրի համար: Կայուն են մնայի մոտավորապես 15-ից 16-ի հասնող կանոնական պատկերներ, որոնց կարելի է հանդիպել մեր հետինակի պատկերազարդած գրեթե բոլոր ձեռագրերում<sup>15</sup>:

<sup>12</sup> Ավետարանական կանոնիկ նկարաշարի առանձնատկրությունների մասին տես «Լազար Բ. Ի. Նովու գաղափարները մասին» և «Վահագան Կառավարությունը մասին»:

<sup>13</sup> Հարսանիքը Կանայում, Ականակի բաշխումը, Պետրոսի թուրահավաստությունը, կույրի, անդամաւոյի և դիվահարի բուժումը:

<sup>14</sup> Սղբառ Ղազարոս Արքահամբ գրկում, մեծանություն՝ դժոխքում, իմաստում և հիմար կանայք...

<sup>15</sup> Նկարաշարի այլպիսի յորոշման բնույթը տեղական-վասպուրականայն միջավայրի, ըմբռնությունների ու տարամդրությունների արգասիքն էր: Պետականություններ և ազգային հճանություններ զորք երկրություն մի քանի հարյուրամայի շարունակ տնօրինում էին օտար բռնակալմերը: Վերջիններս միջոցների առջև չկանգնելով զգում էին ոչ միայն օրինականացնել իրենց ուազմական ու քաղաքական իշխանությունը, այլև տարածել տեղական բնակչության համար խոր իրենց դպավաներն ու սովորությունը: Նման ծանր կացության մեջ ընկած ժողովուրդը ազգային չկորցնելու միտումով, բռնականարար, ի՛ ավելի ամոր է կաշում հին պալադներին՝ թե՛ իր սովորությունում ու կենցաղում, թե՛ լեզվում և թե՛ արվաստում: Առաջին պահ են մղվում ոչ այնքան արվաստի որակի ու տեսակի, զրա առաջընթացի խընդիրները (դրա համար այլև համապատասխան հայադրյաններ էլ չկային), որքան հինը իր բռվանդակությամբ ու մաքրությամբ պահպանելու միտումը: Թերևս դրանով էլ պետք է բացատրել ոչ միայն նկարաշարի, այլև Վասպուրականի մանրանկարչության ոճի հայտնի պահպանողականությունը, որն այս դեպքում արդեն դրական երանգավորում է ստամու:

Ամբողջությամբ վերցրած պատկերագրությունը պատեղ կազմում է մի խումբ, որտեղ կենտրոնական կերպարը Քրիստոսն է իր համարդկապին ստաքերական գործունեությամբ: Նկարիչը այդ գլխավոր կեր-

փոխարարերական այս եղանակը տարածված է եղել Հայաստանում ավելի վաղ, քան X դարը, ինչ էլ գրությունը ստացել «Եշմիածնի» 898 թվականի հշանավոր Ավետարանում<sup>17</sup>:

Թեմատիկ նկարները գրադեցնում են ձևագրի սկզբի թերթերը<sup>18</sup>: Այնուհետև հանդիպական երկու էջերի վրա Կարպիանոսին ուղղված Եվկերիոսի ոջովնի բնագիրն է: Ապա՝ համարարրատի տախտակները՝ գեղեցիկ խորանազարդերով ու սյուներով: Յորպարանչյուր ավետարանական բնագրի սկզբին համապատասխան ավետարանիչի (հեղինակի) դիմաներն են, ինչ հանդիպակաց էջում զարդարուն անվանաթերթը: Այսուղի մասնավորապես առանձնանում են խորիրդանշող կենդանիների՝ մարդ, եղ, աղոթ և արծիվ, զարդապատկերները:

Մահրանկարներն ունեն հորինվածքային պարզ կառուցվածք և հաջորդականութեն զարգացող պատմողական բնույթը: Նովերսկ այն դեպքերում, երբ նկարիչը փորձում է յորպի մեկնաբանություն գրուել, նա չի համարձակվում խախտել ընդհանուր այդ սկզբնաւորը, որպեսզի դիտողի ուշադրությունը չբեկուի պատկերների անհջական-հաջորդական կապակցությունից:

Հովհաննես Խիզանցու մահրանկարների պատկերագրության հարցերին այս հորիվածում չենք անդադանալու<sup>19</sup>, բացառությամբ թերևս № 5444 ձեռագրի Թա էջում հանդիպող «Վերջին դատաստան»-ից: Այդպիսի հորինվածք Վասպորականու առաջին անգամ է հանդիպում: Տեսարանը բաժանված է երկու հատվածի: Վերին ձախ մասում ողջ հասակով կանճնած հրեշտակը

<sup>17</sup> Der-Nersessian, The date of the initial miniatures of the Etchmiadzin Gospel, Chicago, 1933, p. 4.

<sup>18</sup> Վասպորականի նկարազարդ ձեռագրերի գեղարվատական հարդարանքի ընդհանուր սկզբունքների մասին հանգամանորեն խոսել ենք հրատարակությունունք, գիրք Ս., աշխատություններ:

<sup>19</sup> Հովհաննեսը մեծ մասամբ կրկնում է Վասպորականի անխոր մահրանկարների մոտ հանդիպող ձևերը: Այդ մասին տես մեր հրատարակած մի քանի հորիվածները: Սիմեոն Արծիշշեցին Վասպորականի մահրանկարչական դպրոցի վար շրջանի Աերկայացոցից, «Բանքեր Մատենադարանի», № 6, Երևան, 1962, էջ 297—320: Մահրանկարիչ Զարարիս Աղյամարցի, «Պատմա-բանասիրական համեստ», № 2, 1966, Երևան, էջ 199—209: Մահրանկարիչ Կիրակոս քահանա, «Եշմիածն», Գ, 1973, էջ 48—53, ինչպես նաև՝ Ծաղկող Ծերու քահանա, «Եշմիածն», 1974, № Գ, էջ 28—33:



Պատմիքաստու Հովհաննես Բարունու դիմանկարը  
(ձև. № 848, Մաշտոցյան Մատենադարան)

պարով է խորիրդանշել քրիստոնեական կրոնի և ուսմունքի հիմնական սկզբունքները՝ հավասարապես ընդգծելով թե՛ հայունության և թե՛ վախճանաբանական բնույթի թևամաները: Իսկ հին կտակարանային պատմությունների հաճախակի մեջքերումը ներքին կապվածությամբ ուղղակիրեն զուգորդվում էն նոր կտակարանի հետ<sup>16</sup>: Սիրարիի Տեր-Ներսիսյանը նկատում է, որ թեմաների ընտրության խորիրդանշական-

<sup>16</sup> Օրինակ՝ Արքահամի զոհաքերությունը՝ իր իսականության և փրկության խորիրդանշան: Ի դեպք, Հովհաննեսի ընդորինական № 5727 ձեռագրում «զոհաքերության» նկարի մոտ մակարված է «Ալրամբան որ զորդին մատու առնէ Աստուծոյ, վասն որոյ հաճակ Աստուծ ես գլուխ փոխանակ՝ և արձակեաց զորդին: Կարինակ միածին որդույն որ ապաւաց զմոց խաչին» (էջ 2ր):

կշուում է մարդկանց մեղքը: Նրա դիմացում պաղատողի տեսքով թողովիլուն է խնդրում մի աշխարհական «զգործ մարդոյս այս կշուն և սա աղաղակէ»: Ցածի մասում սկի, գորշ շագանակագույնի, մուգ կապուտի ծանր տոների մեջ դժոխային վիհերում դատապարտվածներն են, որոնց մերկ մարմինները տանջարավում են թունավոր օձերի ու հսկա վիշապների առաջացրած գալարապուլտներում: Պարզ, թերևս փոքր-ինչ սրամիտ լուծմամբ նկարիչը կարողանում է ամրոջ էլուժամբ արտահայտել դժոխիք զարհուրանքները: Տպավորությունը ուժեղանում է այդ երեք-չորս գովաների (նաև կեռակարմիր) ստեղծած շարով, որտեղ հիմնական մոտիվը մուգ կապուտի և կարմիրի հակադրությունն է:

Հովհաննեսը պրոֆեսիոնալ մակարդակ ունեցող նկարիչ է: Քաջ ծանոթ լինելով պատկերվելիք հովիթն, նաև այլևս ասես ճիգ չի գործարում ինչպես դրանց մեկնաբանման, այսպես էլ արտահայտման միջոցների ընտրության համար: Հարթագծային ուն նրա տարերքն է: Եջի մաքրության վրա, որտեղ չկա բնանկար ու երկրորդ պլան, սահմանությամբ որպագծվում են միայն ֆիգուրներն ու անհրաժեշտ առարկաները: Գծային սույն կառուցվածքին համապատասխան արժեք է ձեռք բերում գովաների սակալարթի, բայց հնչել շարը, բաղկացած կրմիրից, կանաչից, կապուտից և շագանակագույնից: Վերջիններս մեծ մասամբ գործածվում են մաքոր, չնայած նըկարիչը երբեմն դիմում է խառնորդներին ստեղծելով հաւաքական իր սիրած մոխրաշագանակագույնի և վարդաշագանակագույնի երանգները:

Գեղանկարչական այդ գուսայ միջոցներով ստեղծված աշխարհը իրականի հնանկուրը չէ, և նկարիչն այդպիսի խնդիր չունի: Ուստի վերացական թվացող այդ պատկերածում խորթ են լինելու ուստի իրականությունից բխող չափանիշները, ինչպիսին հեռանկարի ու ծավալի հասկացողությունն է, հյութականության արտահայտումը և այլն: Միշնադարյան մտածողությունը կերպարվեատում հակված է ամեն մի իրի մեջ այս ալլարանական իմաստ տեսնել, կրա հետևում թաքնված այլ գաղափարների խորհրդանքները կուանել: Միշնադարյան մարդը ճգոտում է հոգեպես կապվել իր պաշտամունքային էակների հետ: Անս այս առումով, թվում է, Վասպորականի մանրանկարչության հարթագծային, այսպես ասած, «վերացական» ոճը լիիվ հակամետ է ժամանակի գեղագիտության գաղափարական միտումներին: Նայում են «Մկրտության», «Ալլակերպո-

թյան», «Ոտնլվա» և տնօրինական մեկ-երկու այլ տեսարաններին ու զարմանում, թե այդ մերկ գծերի, մեկ-երկու հասարակ, պարզ գովաների միջոցով ինչպես է նկարիչը կարողանում իր միտքը այնքան դիպուկ,



Սատվածամայրը Մանուկ Ջիմսի հետ և պատվիրատուները (Ձեռ. Մատ. № 346)

այնքան սուր ու անսպասելի հրամցնել քեզ:

Բայց ձևի ու բռվանդակության արտահայտման հենց այս սահմանագծում վասպուրականցի նկարիչը ասես անենակատելի ու անզգավի մի քայլ է կատարում դեպի իրական ու շշափելին: Եվ դա մեր վարպետի արվեստի հետաքրքրական կողմերից մեկն է: Առանձին պահերի ընդգծմամբ կամ մի փոքրիկ շեշտով դիտողին նա հաղորդակից է դարձնում իր աշխարհական հովզերին ու հետաքրքրություններին և՝ իրողության ինչպիսի՝ ճանաչողությամբ: Հենց դրանում էլ վերացականության, գաղափարների չոր ցուցադրման ու, միաժամանակ, կյանքի ու իրականության անսաստ արտահայտության մեջ է միշնադարյան արվեստի հակասությունը: Ս. Տեր-Ներսեսյանը մի առիթով նկատում է, որ

Առյանիսկ Կիլիկիայում, կրոնական գաղափարահատության հովհանքում նուժում են գործող ուժագործության պայմաններում, նկարիչներն երբեմն հակառակն են ձգտել՝ իրենց ստեղծագործությունները ճշխացնելով կյանքից ու բնությունից առնված մոտիվներով:



Տանայի հարսանիքը  
(ձեռ. Մատ. № 8717)

Հովհաննեսի մոտ ևս նոյն բանն ենք տեսնում. № 8717 ձեռագրում, օրինակ. «Մոտք Երոսաղեմ» նկարը ավելի շատ հիշեցնում է ժողովրդական ծաղկատուն: Նոյնին բաց տարածությունները օգտագործվել են զունագեղ ծառ ու ծաղկունք ցուցադրելու համար: Հյուրին դիմավորությունները, հատկապես երեխաններն, իրենց զըլվարթ որամադրությամբ և շարժ ու ձևով հեռու են կանոնիկ որևէ ըմբռնումից: Նման տպավորություն դիտողը ստանում է նաև «Ծնունդ» պատկերից, որը վեր է ածվել ցնծության, համեմենիանուր ուրախության: Ուշագրավ է հատկապես Հիսուսի հրաշագործությունները պատկերող նկարների հարուստ շարքը: Գործողություններն ընթանում են ժողովրդական միջավայրում և նրանց ներկայացուցիչների մասնակցությամբ: Արժե այստեղ կրկնել հայտնի ա-

սացվածքը, թե Ակարչի համար թեման առիթ է ծառայել կյանքից ու կենցաղից վերցրած դրվագներ պատկերելու համար:

Ի դեպ, Հիսուսի հրաշագործությունների նկատմամբ Վասպորականում ցուցադրված նախասիրության կատակեցությամբ մի միտք է ծագում, որն ինչ-որ չափով կրում է սոցիալ-քաղաքական երանգավորություն: Դարեւ շարունակ տառապելով օտար նկանությունից բռնակառության ծանր լծի տակ և ըստեսներով այդ վիճակից դուրս գալու ունակ հետանիար, ծողովորդն ասես, իր փրկության հույսը կապում է հրաշքների մեջ: Հիշյալ թեմաներին լայն տեղ հատկացնելը այստեղ, հավանաբար, նման տրամադրությունների արտահայտություն է:

Մեր հեղինակի մոտ ո՞չ միայն թեմաների ընդգրկման, այլև ձևերի նոյնին մասնամասն ընտրության: հարցերում բավական կայուն պատկերացումներ կան, որոնք հաճախ միանան մեկնարաւանություն են ստանում: Վասպորականի դպրոցին ընորոշ այդ հատկանիշը առաջ է բերում նկատելի միօրինակություն՝ «տրաֆարետի» հասնող անհրադույթ վտանգով հանձերձ: Սակայն նկարիչը, մասնավորապես շնորհալիները, փորձում է խոսափել այդ վտանգից ակտիվ վերաբերմունքի շնորհիվ: Այսինքն նկատվող միօրինակությունները՝ հատկապես մարմնի պատկերման ընթանուր դիրքը, հասելու եղանակը, ձեռքերի շարժումը և, իհարկե, դիմագծերը «հոսուեցվում են» իրենք իրենցով՝ դիմախաղերի մեջ արտիստականության համանող շեշտ է դրվում, շարժումները հասցվում են խորհրդանշական իմաստի, որոնք խայտարինության աստիճան վառ գույների մեջ նպաստում են նկարի անմիջական տպավորությամբ<sup>20</sup>: Բայց ոչ միայն դա: Զափազանցման կամ պայմանականության հասնող այդ եղանակի մեջ մեկտեղ նկարիչը դիմում է համարձակ այլ հնարամիջոցների ևս, ինչպիսին խիստ ոճավորումներն են, կամ մաքրոր կենցաղին դրվագների համակցումը: Առաջին դեպքում մենք տեսնում ենք զծի ու գույնի անբնական թվացող, բայց հնայիշ խաղը՝ ինչպես մարմինների մեկնարանման, այսպես էլ դիմապատկերի մեջ՝ հա-

<sup>20</sup> Տպավորության ամրողական ընկալման դեպքում դիտողի ուշադրությունը չպետք է ցովի կատարողական մանրութեանը պարագաների վրա: Նկարիչը առանձին անհանգստություն չի դրսուրում պատկերում այսպես ասած անստոմիական գերումների նկատմամբ՝ լինում են անվարժության դեպքեր, սիալներ, բայց դրանք նոյնին չեն նկատվում ամրողականության մեջ, իսկ երբեմն էլ կարծես ուժեղացնում տպավորությունը և դեռ տեղ թողնում նրանակայության համար:

շորդական ոիթմիկ կրկնությունները, մեկ կետից դուրս եկող ճառագայթները, մազերի հարդարանքի լուրատիպ ձևը, աղեղնավոր վերջավորություն ունեցող աչքերն ու հոնքերը, բեղ ու մորուքը... Գոյզներում ևս ելակետը նոյնն է: Գունա-և-լոնցինալ տպավորության լեզուն նոյնքան պայմանական է, նոյնքան ոճավորված, որքան վերը նշված գծանկարային տարրերը: Հատ որում, իրենց ողջ հնչեղությամբ դրանք շեշտում են էջի երփնագրի ինքնարավ բրնձութը: Այսպիսի ոճավորման ու զարդանույշան դեպքում, մանավանդ եքր մաքոր ֆունի վրա ընդգծված սիլուետներից զատ լինում են նաև գեղագրության (բացատրությունների) նմուշներ, էջի գեղարվեստական կազմակերպման մեջ գերակշող է դառնում «տարերային» դեկորատիվությունը՝ Վասպորականի մանրանկարչության հատկանշական գծերից մեկը:

Մյուս դեպքում, ինպես ասվեց, պատկերները աշխատացվում են կենցաղային դրվագներով. իրականությունից վերցված մի փոքրիկ շարժմամբ, մի շեշտով նկարիչը անկյանք լովացող գծապատկերներին հոգի է տախի, առինքնող դարձնում այն: Ահա № 3717 ձեռագրի «Հարսանիքը Կանայում» պատկերը՝ հարուստ ժողովրդական հումորի երանգներով: Խնջույքի մասնակիցներից մեկը ողջ գիշերվա կեր ու խոտից հոգնած ու հարրած ձեռքը դեմքին, գլուխը կախ ննջում է, «Ննջում է խառքած», բացատրում է նկարիչը:

«Ծննդյան» տեսարանում հովհաններից մեկը, ինչպես մեր գյուղական առօրյայում է լինում, երկու ձեռքերով բռնել է խոյի ոտքերը և զցել մեջքին: «Հարույշյան» տեսարանում խիստ ծիծաղաշարժ են թմրած զինվորները, որոնք մանկական խաղաղիքների հման փովել են այս ու այն կողմ:

Խուերով ռեալ միշավայրից վերցված մատիկների մասին, հարկ ենք համարում հիշել Հովհաննեսի վրձնած ժամանակակից մարդկանց դիմապատկերները: Վերջիններս ունեն ճամաչողական նշանակություն և արժեք թե՛ ազգային բնութագրման՝ դիմագծերը, արտահայտությունը, և թե՛ ազգագրական առումով՝ տարազը, զանազան առարկաներն ու արդյունարդը: Ուշագրավ են այս առումով № 5562 ձեռագրում Հովհաննեսի քահանայի, երա կնոջ ու համգուցյալ որդու ծննդադիր պատկերները. «Յոհաննեսի քահանայն և կենակիցն իր աղաշն զԱստուած վասն թողութեան մեղաց իրեանց և ծնաղացն: Ես Յոհաննես քահանային որդին եմ, Թումայ քահանայն, որ տարածամ փոխեցայ ի Քրիստոս. ո՞հ, ո՞հ, ո՞հ»: Վիշտ ու թշվառություն տեսած նկա-

րիշը խորապես զգում է դա՝ այդ տրամադրությունը մարմնավորելով նաև պատկերի մեջ՝ թախիծ ու խղճանարություն կա երիտասարդ Թումայի դեմքին: Իսկ մեկ այլ ձեռագրում, լուսանցքի զարդամուխների մեջ, նկարիչը սրտից բխած հոգոցն է զադունագրել. «Սև աշխարհ, սուս ես ամեն, ո՞հ, ո՞հ»<sup>21</sup>:



«Մուտք Երուսաղեմ»  
(Ձև. Մատենադարանի № 3717)

Հովհաննեսի խողած ժառանգության մեջ հատուկ տեղ են գրավում Մատ. № 346 Սատվածաշնչի բարձրարվեստ մանրանկարները: Սատվածաշնչն ընդօրինակվել է մեզ արդեն հայտնի Հովհաննես Ուրունու պատվերով: Մանր հիշատակագրություններից պարզվում է, որ այս ձեռագրի վրա աշխատելիս Հովհաննեսին զգալիորեն օգնել է շատ չնորիսալի մեկը՝ «զելուզակ Պետրոսը»<sup>22</sup>: Մեզ չհաջողվեց պարզել Պետրոսի ով լինելը: Համենայնդեպս վերջինս մի սովորական աշակերտ չէր և իր նշանակալի դերն է խաղացել հիշալ Աստվածանշի պատկերագրդման գործում<sup>23</sup>: 560 թերթ ունեցող այս մատյանի գեղարվեստական հարդարանքը փոքր-ինչ այլ սկզբունքով է արված: Բացառությամբ մեկ դեպքից (Էջ 1բ), երբ նկարը ամբողջական էջ է զբաղեցնում, մյուս թեմաները տեղադրվում են բնագիր պարունակող էջի մի որևէ հատվածում կամ ուղղակի լուսանցք-

<sup>21</sup> Ձև. № 346, էջ 459բ:

<sup>22</sup> Մի բանի մանրանկարների մոտ այս Պետրոսը թողել է հետևյալ տողերը. «Անմեղադիր լէր բաբունի (խոսք պատվիրատուի մասին է—Հ. Հ.) զայս երկու երեսս անձնն լերեցն ի վայր աւերեց և զելուզակ Պետրոս վիրաւորեց: Ո՞վ որ կարդա, թող զմեզ լիշեալ»:

<sup>23</sup> Այդ պատճառով էլ մենք հիշալ ձեռագրին առանձին ենք անդրադառնում:

Աերի մեջ: Խոկ 1ր էջի վրա տեղադրված է Հովհաննես Շաբունու պատկերը: Վերջինս Աերկայացված է պաշտոնական արարողության պահին. վրան շքել թիկնոց՝ ինչպես թագավորական ծիրանի, հաճախատ ու արժանապատվորակամբ լի ևս ունկնդրում է (Կամ ընդունում) իր դիմացում կանգնած Աերի մեծարանը: Զեռագի 451ա էջում «Քրիստոսի մուտքը Երևանին» Ակարն է, 280ա էջում՝ Դավիթ թագավորի, որը հըստած բարձր արտղին նվազում է թառը հիշեցնող մի գործիք, 343ա էջում՝ Երևանին տաճարը և այլն<sup>24</sup>: Գեղեցիկ է հատկապես 441ա էջի հարդարանքը: Ցածի ձախ կողմուն առանձին շրջանակի մեջ Աստվածամայրն է մանկան հետ. Արա ոորերի մոտ պաշտոնի դիրքով կրկին Հովհաննես Շաբունին: Նկարի ֆոնը ծածկված է մուգ կապույտի հավասար շերտով, որի հետ հագուստների կարմիր, կանաչ և վարդագույն երանգները փայլիղով քարերի տպակիրությունն են լողենում:

Այսպես շքել զարդարված ձեռագիր մենք, փաստորեն, առաջին անգամն ենք հանդիպում Վասպորականի XIV—XV դարերի մանրանկարչական արվեստում: Գուցե մեծանուն պատմիքատոնի հետինակույրուն ու ճաշակն է ստիլի Հովհաննես խիզանցուն և իր աշխատանքային ընկերություն՝ եղուակ Պետրոսին, Աերդնելու իրենց ողջ շնորհը ու հմտությունը համան որակի աշխատանք ստեղծելու համար<sup>25</sup>: Աչքի է զարդում հատկապես գովազնի ճոխ տպավորությունը. ուկու ֆոնի վրա գերիշխուս է կապույտը՝ միահյուսված արմավետու թավ կանաչ տերևազարդերի հետ: Կեռասակարմիրի ու դեղինի առանձին բժանաւովածները ինքնարակ խառ են ատեղծում հայտելով Ակարինի ոչ այնքան իրական պատմողական մեկնարանությանը, որքան գուտ գունի շահեկանությանը, այսինքն,

<sup>24</sup> Այս ձևի նկարազարդումները, հատկապես լուսանցքում, մոզ հիշեցնում է Էջմիածնի ավետարանը:

<sup>25</sup> Հայվանարար, դա այդպես է եղիք: Զնայած կրնկրու փաստերի բացակայությանը, ենթադրում ենք, որ Ակարիչները իրենց աշխատանքը կատարելիս հաշվի են առել և պատմիքատոնի ով լինելը, և, բնականարար, տրվող վարձը:

դիտողի վրա թողած գումային ազդեցության չափանիշը դատևում է ոչ թե բնութանակատնակ եղան հարազատությանը, որքան էջի գումային զարդարադրանքը որպես աղդամիմիկ: Դև արդեն մեր նկարչի անհատական նախասիրության ու ճաշակի, երա գումային երևակայինան արտահայտությունից է բխում:

Ավետարանիչների դիմանկարներում, անվանաթերերում ու խորանազարդերում հետևողականորեն պահպանվում են Վասպորականում ընդունված սովորությունները: Հատկապես հետաքրքրական են խորանազարդերը № 3717 ձեռագրում երբեք չկըրկնավոր, երբեք չնմանվող: Դրանցում մի կողմից տեղական-վասպորականյան մին ձևերն են դրսուրվում ավելի կրնատրուկիվ բնույթի պայտան կամարներ, պացիկ, պարզ պյուներ, մյուս կողմից՝ զարդարին մեկնարանման հակումը, որն ամբողջ էջին ավելի ոեկրտատիվ բնույթ է տպան: Մասնավորապես ցայտուն են ոորեան ծիածանազարդերը, բուսակյուսվածքները: Խորանների գիշազարդերի մեջ հաջորդականորեն տեղադրված են խորիդանշական առարկաներ—գիրք, սկիճ, խաչ և այլն: Խարիսխներն ու խոյակները համեմատարար պարզ են:

Հովհաննեսի ձեռագրերում չափազանց հարուստ են ներկայացված հատկապես լուսանցքարդերը: Ե. Նիկոլսկայայի պատկերավոր արտահայտությամբ «Նկարչի երեկակապությունը այստեղ ատեղծում է այնպիսի բանակությամբ ամենատարբեր բուսական ու կենդանական զարդամուսիներ, որոնցից գրեթե ոչ մեկը նույնությամբ չի կրկնում մյուսին»: Թոշունների տեսակները, ձկները, նապաստակը, կապիկն ու վագրը, սիրեններն ու երևակայական մյուս կենդանակաները ներկայացված են բուսամուտիվների հետ հյուսված, արտակարգ վարժ ու միուս ձեռքով:

Հովհաննեսը Վասպորականի XIV—XV դարերի մանրանկարչության ամենափայլուն դեմքն է, առավել տաղանդավորն ու հմուտը:

Սույնով մենք ավարտում ենք Վասպորականի XIV—XV դդ. անվանի մանրանկարչներին նկարված մեր հոդվածաշարը: Նախորդների մասին տե՛ս ծանոթագրություն № 19:

